



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ  
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

26/04/2020

**ՈՐՈՇՈՒՄ N 25-Ա**

**<<ՔԱՂԱՔԱՑՈՒ ԲՅՈՒՋԵ>> ԵՆԹԱԴՐԱՄԱՇՆՈՐԻ ՄՐՑՈՒՅԹԻ  
ՀԱՅՏԱԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ  
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՆԵՐԴՐՄԱՆ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ, 6-րդ և 42-րդ կետերի պահանջներով, համաձայն Գորիսի համայնքապետարանի և «Համայնքների ֆինանսիստների միավորում» ՀԿ միջև կնքված համաձայնագրի 2-րդ հոդվածի 2-րդ կետի, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով՝ կողմ՝ 8, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. Հաստատել «Քաղաքացիների ձայնն ու գործունեությունը Հայաստանի խոշորացված համայնքներում» ծրագրի «Քաղաքացու բյուջե» ենթադրամաշնորհի մրցույթի հայտադիմումների գնահատման արդյունքները և հաղթող նախագիծ հայտարարել «Գորիս քաղաքի թիվ 3 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի կողմից ներկայացված «Հավասար, հասանելի և որակյալ նախադպրոցական կրթության մատչելիություն» Գորիս համայնքում նախագիծը:

2. Սույն որոշման առաջին կետում նշված ենթադրամաշնորհի համար սահմանել համայնքային ներդրում՝ 500 /հինգ հարյուր/ եվրոյին համարժեք ՀՀ դրամի չափով՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից տվյալ օրվա սահմանած փոխարժեքով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -8

Դեմ -0


Ձեռնպահ -0

ԱՂԱԲԵԿՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ԱՂԱՋԱՆՅԱՆ ԷՐԻԿ

ԱՐՉՈՒՄԱՆՅԱՆ ՄՐԵՐ

ԼԱՁԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ



ՀԱԿՈՒՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ



ՄԿՐՏՁՅԱՆ ԱՐՄԵՆ



ՈՍԿԱՆՅԱՆ ՈՍԿԱՆ



ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ



ԱՌՈՒՇ ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

2020թ. ապրիլ « 28 »  
ք. Գորիս